

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ  
պարոն ՍԱՄՎԵԼ ՆԻԿՈՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նիկոյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Սոյոպա Սաֆարյանի, Արծվիկ Մինասյանի, Վահան Հովհաննիսյանի և Արմեն Մարտիրոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Ներկայացված նախագծերի փաթեթով առաջարկվող՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները 100 տոկոս համամասնական ընտրակարգով անցկացնելու համար գործնականում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք անհրաժեշտ է

հաշվի առնել նախքան օրենսդրական համապատասխան փոփոխություններ նախատեսելը: Մասնավորապես, գտնում ենք, որ Ազգային ժողովի կազմավորման կարգը սահմանելու հարցում անհրաժեշտ է ոչ միայն համակողմանիորեն իրականացված վերլուծությունների արդյունքում գնահատել օրենսդրական փոփոխությունների նպատակահարմարությունն ու անհրաժեշտությունը, այլև հաշվի առնել օբյեկտիվորեն գոյություն ունեցող մի շարք հանգամանքներ:

Տարբեր երկրներում ընտրակարգի այս կամ այն ձևի առկայությունը պայմանավորված է բազմաթիվ հանգամանքներով: Դրանք տարբեր են միապետական և հանրապետական (այդ թվում խորհրդարանական, նախագահական, կիսանախագահական) կառավարման ձև ունեցող պետություններում, դաշնային և ունիտար պետություններում, միապալատ և երկպալատ պառլամենտների պարագայում, սահմանադրական (կամ օրգանական) օրենքների առկայությամբ կամ բացակայությամբ և այլն:

Որևէ համակարգի միանշանակ ընտրությունն ինքնին կապ չունի ընտրական գործընթացի արդյունավետության հետ: Հայաստանի Հանրապետությունում, որպես կիսանախագահական կառավարման ձև ունեցող պետություն, համամասնականին զուգահեռ մեծամասնական ընտրակարգի առկայությունը հանդիսանում է այն երաշխիքը, որն ապահովում է կոնկրետ պատգամավորի կողմից բնակչության որոշակի հատվածի շահերը ներկայացնելու հնարավորությունը: Ակնհայտ է նաև, որ պառլամենտական մեծամասնություն կարող է ձևավորվել միայն համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներից, քանի որ վերջիններիս թիվը խորհրդարանում զգալիորեն գերակայում է մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների թվից և, բացի դրանից, չի բացառվում նաև, որ մեծամասնական ընտրակարգով ընտրվեն նաև համամասնական ընտրակարգով առաջադրված պատգամավորներ: Մեծամասնական ընտրակարգի առկայությունն ինքնին որևէ կերպ չի կարող անդրադառնալ ընտրական

գործընթացի, այդ թվում՝ ընտրվելու իրավունքի արդյունավետ իրականացման վրա: Ընդհակառակը՝ այս համակարգը հնարավորություն է տալիս ընտրողների այն զանգվածին, որոնք չեն ցանկանում իրենց ձայնը տալ որևէ կուսակցության կամ կուսակցական դաշինքի, որոշելու իրենց կողմից նախընտրված թեկնածուին՝ կուսակցություններից դուրս:

Բացի դրանից՝ մեծամասնական ընտրակարգի առկայությունը չի բացառում որևէ կուսակցությանը հարող կամ դրա անդամ հանդիսացող թեկնածուի ընտրությունը հենց մեծամասնական ընտրակարգով, հետևաբար, անցումը 100 տոկոս համամասնական ընտրակարգի ինքնին չի կարող համարվել առաջընթաց գործող ընտրակարգի համեմատ: Գտնում ենք, որ այս փուլում այդ անցումը ժամանակավրեպ է:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը նպատակահարմար չի համարում ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հրայր Թովմայանը:

Օրենքների նախագծերի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ**

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունման**

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների ընդունումը առողջության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

## ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ փաթեթ) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. նախագծերի փաթեթի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերի փաթեթը բնապահպանության ոլորտին չի առնչվում և այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Փաթեթի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

## Եզրակացություն

«ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,  
<<Ազգային ժողովի կանոնակարգ>> Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն կատարելու մասին>> և <<Սահմանադրական դատարանի մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին>>  
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի /այսուհետ՝ Նախագծեր/  
սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման  
վերաբերյալ

Նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման  
ազդեցության գնահատումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության  
կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի <Նորմատիվ իրավական ակտերի  
նախագծերի՝ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության  
գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին> N 18-Ն որոշման համաձայն:

Սոցիալական պաշտպանության ոլորտում Նախագծերն ունեն չեզոք  
ազդեցություն:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ**

**ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում  
փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և  
«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության  
օրենքների նախագծերի վերաբերյալ**

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է Ազգային ժողովի ընտրություններն ամբողջովին համամասնական ընտրակարգով անցկացնելուն* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:



## ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,  
«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում  
փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության  
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) մրցակցության բնագավառում ազդեցության գնահատման գործընթացի նախնական փուլում պարզվել է՝

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

## Եզրակացություն

**«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

«Ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը համապետական ընտրությունների անցկացման ժամանակ կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի ծախսերի նվազեցման:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ վերոհիշյալ նախագծերի փաթեթն ընդունվելու կամ չընդունվելու դեպքում ՀՀ պետական բյուջեի մուտքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում (այսուհետեւ՝ Օրենսգիրք) (2011 թվականի մայիսի 26-ի թիվ ՀՕ-164-Ն օրենք) 2-րդ հոդվածում՝

- 1) 4-րդ մասից հանել «եւ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով» բառերը,
- 2) 5-րդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 2.** Օրենսգրքի 6-րդ հոդվածի 4-րդ եւ 6-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 3.** Օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «եւ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների» բառերը:

**Հոդված 4.** Օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասում «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորների մանդատների թվին հավասար թվով» բառերը փոխարինել «թվով 41» բառերով:

**Հոդված 5.** Օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ պարբերության առաջին նախադասությունում «մեծամասնական ընտրակարգով ընտրվող պատգամավորների մանդատների» բառերը փոխարինել «41» բառով, իսկ նույն պարբերության վերջին նախադասությունը հանել:

**Հոդված 6.** Օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 7.** Օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 8.** Օրենսգրքի 19-րդ հոդվածում.

- 1) 2-րդ, 3-րդ, 5-րդ, 10-րդ, 12-րդ կետից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.
- 2) 26-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 9.** Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 10.** Օրենսգրքի 21-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 11.** Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասից եւ 2-րդ մասի առաջին կետից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 12.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) առաջին նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.
- 2) երկրորդ նախադասությունից հանել «միայն» բառը
- 3) երրորդ նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.

4) հինգերորդ նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 13.** Օրենսգրքի 25-րդ եւ 26-րդ հոդվածների 2-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 14.** Օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասում «համամասնական ընտրակարգով» բառերը փոխարինել «Ազգային ժողովի ընտրությունների համար» բառերով:

**Հոդված 15.** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 16.** Օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 17.** Օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության «Ազգային ժողովի մեծամասնական ընտրատարածքների կազմավորման մասին որոշմամբ» բառերը հանել:

**Հոդված 18.** Օրենսգրքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասության «,Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի նոր կամ լրացուցիչ» բառերը եւ 6-րդ մասի առաջին նախադասության «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի լրացուցիչ ընտրությունների,» բառերը հանել:

**Հոդված 19.** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 5-րդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 20.** Օրենսգրքի 46-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի առաջին ենթակետից եւ վերջին նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

2) 6-րդ մասի առաջին նախադասության «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի եւ» բառերը եւ երկրորդ նախադասությունն հանել:

**Հոդված 21.** Օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 8-րդ կետից հանել «բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավոր,» բառերը:

2) 12-րդ կետից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 22.** Օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետից հանել «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի,» բառերը:

**Հոդված 23.** Օրենսգրքի 67-րդ հոդվածի 10-րդ մասից հանել «ընտրությունների դեպքում՝ համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 24.** Օրենսգրքի 74-րդ հոդվածի վերնագրից, առաջին եւ երրորդ մասերից հանել «Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների եւ» բառերը:

**Հոդված 25.** Օրենսգրքի 103 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 103. Ընտրական համակարգը*

Ազգային ժողովի ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով: 131 պատգամավոր ընտրվում է համամասնական ընտրակարգով, Հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ բազմամանդատ ընտրատարածքից՝ կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուների թվից:»

**Հոդված 26.** Օրենսգրքի 104-րդ հոդվածի «համամասնական ընտրակարգով ընտրության, եւ մեկ ձայնի իրավունք՝ մեծամասնական ընտրակարգով ընտրության ժամանակ,» բառերը հանել:

**Հոդված 27.** Օրենսգրքի 106-րդ հոդվածի առաջին մասի առաջին նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը, իսկ երկրորդ նախադասությունից հանել «եւ միայն մեկ մեծամասնական ընտրատարածքում» բառերը:

**Հոդված 28.** Օրենսգրքի 108-րդ հոդվածի առաջին նախադասությունից, 1-ին եւ 2-րդ կետերից, 3-րդ կետի 2-րդ ենթակետից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 29.** Օրենսգրքի 109-րդ հոդվածի վերնագրից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 30.** Օրենսգրքի 121-րդ հոդվածի առաջին մասի երկրորդ պարբերությունից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 31.** Օրենսգրքի 122-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 32.** Օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 33.** Օրենսգրքի 114, 115, 116, 117, 118 եւ 119 հոդվածները ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 34.** Օրենսգրքի 124-րդ հոդվածում՝

1) առաջին մասից «համամասնական եւ մեծամասնական ընտրակարգերով» եւ «առանձին» բառերը հանել.

2) երկրորդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.

3) երրորդ մասն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 35.** Օրենսգրքի 125-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը,

2) առաջին մասի առաջին, երրորդ եւ չորրորդ կետերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.

3) երկրորդ մասի առաջին նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգի համար նախատեսված» բառերը, իսկ վերջին նախադասության «համամասնական ընտրակարգով քվեարկությանը» բառերը փոխարինել «ընտրություններին» բառով.

4) երրորդ մասի առաջին նախադասությունից հանել «համամասնական ընտրակարգի համար նախատեսված» բառերը.

5) վեցերորդ մասն ուժը կորցրած ճանաչել.

6) 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ մասերից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.

**Հոդված 36.** Օրենսգրքի 126-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել.

**Հոդված 37.** Օրենսգրքի 127 հոդվածում՝

1) երրորդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.

2) հինգերորդ եւ վեցերորդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 38.** Օրենսգրքի 128-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 39.** Օրենսգրքի 129-րդ հոդվածում՝

- 1) երրորդ մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը.
- 2) հինգերորդ եւ վեցերորդ մասերն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 40.** Օրենսգրքի 165-րդ հոդվածի 1-ին մասից հանել «համամասնական ընտրակարգով» բառերը:

**Հոդված 41.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Նախագիծ  
Պ-1324՝-12.01.2012-ՊԻ-010/0

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն  
կատարելու մասին**

**Հոդված 1.** «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի փետրվարի 20-ի թիվ ՀՕ-308 օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետն ուժը կորցրած ճանաչել:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրը:

Նախագիծ  
Պ-1324՝-12.01.2012-ՊԻ-010/0

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

**Հոդված 1.** «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-58-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 74-րդ հոդվածի՝

1) 2-րդ մասը խմբագրել հետեւյալ բովանդակությամբ. «2. Պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումներով սահմանադրական դատարան կարող են դիմել կուսակցությունները կամ կուսակցությունների դաշինքները:».

2) 9-րդ մասից հանել «մեծամասնական ընտրակարգով» բառերը,

3) Ուժը կորցրած ճանաչել 18-րդ մասը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

## ՕՐԻՆԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Օրենսդրական փոփոխությունների առաջարկի նպատակն է ամրագրել Ազգային ժողովի ընտրությունները 100% համամասնական ընտրակարգով անցկացնելու իրավական հիմքերը: Հանրապետության օրենսդիր մարմնի ընտրությունը ամբողջությամբ համամասնական ընտրակարգով անցկացումը անհրաժեշտություն է հետեւյալ հիմնավորմամբ՝

1. Սահմանադրության 7-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն կուսակցությունները նպաստում են ժողովրդի քաղաքական կամքի ձեւավորմանն ու արտահայտմանը, իսկ կուսակցությունների մասին օրենքի 21-րդ հոդվածի համաձայն կուսակցությունը միակ հասարակական միավորումն է, որն իրավունք ունի թեկնածուներ առաջադրել Ազգային ժողովի պատգամավորների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների եւ ավագանու ընտրություններում: Հետեւաբար Հայաստանի Հանրապետության քաղաքական համակարգում կուսակցությունների դերի բարձրացումը եւ պետության կառավարման ինստիտուտներում նրանց ակտիվ մասնակցության ապահովումը պահանջում են խորհրդարանական ընտրություններում կուսակցությունների մասնակցության աստիճանի բարձրացում, ինչը կարող է իրականացվել 100 % համամասնական ընտրակարգին անցնելու միջոցով:

2. Այս ընտրակարգի ամբողջական ներմուծումը, խորհրդարանը կարող է վերածել երկրի քաղաքական թիվ մեկ ամբիոնի, որտեղ կլուծվեն երկրի կառավարմանը եւ քաղաքական կյանքին առնչվող խնդիրները եւ որտեղ կծավալվի բացառապես օրենսդրական եւ քաղաքական գործունեություն: Ներկայումս խորհրդարանի գրեթե 1/3-ը կազմող մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորները (131-ից 41-ը), առանձին բացառություններով, չեն իրականացնում այդպիսի գործունեություն, եզակի թվով հարցեր են բարձրացնում, որոնք էլ հիմնականում վերաբերում են տեղական եւ տարածքային կառավարման մարմինների գործառույթներին: Այս ամենը չի բխում Ազգային ժողովի սահմանադրությամբ նախատեսված գործառույթներից եւ նրա բարձր ու պատասխանատու դերից:

3. Սահմանադրության համաձայն քաղաքական եւ պետական կառավարման համակարգերում կարելի է սկզբունք է համարվում բիզնեսի եւ քաղաքականության ու կառավարման տարանջատումը: Մինչդեռ այս պահանջի խախտումը հատկապես դրսեւորվում է մեծամասնական ընտրակարգի գործադրման ժամանակ: Գաղտնիք չէ, որ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորների ճնշող մեծամասնությունը բիզնես ոլորտի ակտիվ դերակատարներից է: Այս մասին բազմիցս բարձրաձայնել են ոչ միայն միջազգային կառույցները եւ գործընկերները, այլ նաեւ Հայաստանի Հանրապետության քաղաքական ուժերը (այդ թվում կոալիցիոն) եւ բարձրաստիճան պաշտոնյաները: Բացի այդ, մինչ այժմ անցկացված խորհրդարանական ընտրությունների ընթացքում իրականացված ընտրակեղծիքների եւ ընտրախախտումների առկայության գերակշիռ մեծամասնությունը բացատրվում են մեծամասնական ընտրակարգով ընտրվող թեկնածուների առկայությամբ եւ նրանց գործունեությամբ:

4. Մեկ այլ կարելի է այն, որ Սահմանադրության համաձայն Ազգային ժողովի բոլոր պատգամավորներն ունեն նույն լիազորությունները (իրավունքներն ու պարտականությունները), մինչդեռ մեծամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներն ու համամասնական ընտրակարգով ընտրված պատգամավորներն ըստ էության ունեն տարբեր իրավունքներ, օրինակ Ազգային ժողովում կառավարությանը հարցերով դիմելու, հարցապնդումներով հանդես գալու, պետական բյուջեի նախագծի ընդունման եզրափակիչ նիստում ելույթներ ունանլու ժամանակ, Ազգային ժողովի հանձնաժողովներում պատասխանատու դերակատարումներ ունենալու հարցերում եւ այլն: Ավելին նրանց համար գործում է համամասնական ընտրակարգով ներկայացուցչությունից տարբերվող ներկայացուցչականության կարգ (տարածքի ներկայացվածություն), այն դեպքում, երբ Սահմանադրությունը չի ամրագրել այդպիսի հնարավորություն:

5. Չնայած միջազգային փորձը նախատեսում է ընտրակարգերի բազմազան մոդելներ, սակայն լավագույն փորձը հուշում է, որ ամբողջական համամասնական ընտրակարգն ունի ավելի շատ առավելություններ, քան թերություններ, ապահովելով մասնակցային ժողովրդավարության արդյունավետ գործադրում: Պատասխանելով 100% համամասնական ընտրակարգի որդեգրման վերաբերյալ ԱԺ ընդդիմադի ՀՅ Դաշնակցություն եւ Ժառանգություն խմբակցությունների առաջարկին, Վենետիկի հանձնաժողովն իր կարծիքում նշել է, որ այն չի հակասում իրենց չափորոշիչներին, այլ ընդամենը պահանջում է քաղաքական համաձայնեցում: Ամբողջական համամասնական ընտրակարգի որդեգրումը համապատասխանում է հայաստանյան իրողությանը եւ բխում է մեծամասնականը աստիճանաբար վերացնելու քաղաքական համաձայնության տրամաբանությունից: Խորհրդարանական ընտրությունները 100% համամասնական ընտրակարգով անցկացնելու վերաբերյալ իրենց աջակցությունն են հայտնել հայաստանյան քաղաքական դաշտում ակտիվ գործունեություն իրականացնող բազմաթիվ կուսակցություններ, քաղաքական ուժեր եւ հասարակական կազմակերպություններ: Սա համոզմունք է ներշնչում, որ առաջարկվող փոփոխությունները ամբողջական աջակցություն վայելելով հասարակության շրջանում, նպաստելու են ներքաղաքական համախոհության ձեւավորմանը եւ հասարակության վստահության վերականգնմանը ընտրությունների նկատմամբ: